9(91.57)
Ա-78

Ա. ԱՎԴԱԼ

Վ. ԹԵՄՈՒՐՃՅԱՆ «ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»

Առանձնատիպ Հայկական ՍՍՌ
Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագրից»,
№ 7, 1956 թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1956

ՊՈՍՏԱՏՈՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 7, 1956 Общественные науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Վ. ԹԵՄՈՒՐՃՅԱՆ «ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ վերջերս լույս տեսավ Վ. Թեմուրճյանի «Գորգագործությունը Հայաստանում» աշխատությունը[1]:

Գորգագործությունը իրև հայ ժողովրդի կիրառական արվեստի կարևոր ճյուղերից, մեկը, մինչև այժմ հանգամանորեն չէր ուսումնասիրված ու արժեքավորված: Ընկ. Թեմուրճյանի աշխատությունը այդ ուղղությամբ կատարված առաջին փորձն է:

Աշխատությունը բաղկացած է երեք գլխից, ունի ռուսերեն ամփոփում, հավելված, հագեցված է հարուստ նկարներով: Վ. Թեմուրճյանն օգտագործել է հայ և օտար հեղինակների բազմաթիվ աշխատությունները, որոնց մեջ խոսվում է հայկական գորգագործության մասին:

Հակառակ բուրժուական մի շարք գիտնականների պնդումներին՝ ընկ. Թեմուրճյանը հայ գորգագործության արվեստը չի համարում արևելյան մյուս ժողովուրդների արվեստից մեխանիկական ընդօրինակություն կամ փոխառություն: Նա հիմնավոր կերպով ապացուցում է մի շարք հին գորգերի զարդամոտիվների հայկական ծագումը: Բայց և նա հայ գորգագործության արվեստը պատմականորեն չի անջատում արևելյան մյուս ժողովուրդների արվեստից, այլ ընդունում է այդ ժողովուրդների փոխազդեցությունը գորգագործության բնագավառում:

Հեղինակը պատմական և հնագիտական հարուստ նյութերի հիման վրա ցույց է տալիս, որ դեռևս 8-րդ դարում (ն. մ. թ.) պատմական Հայաստանի տերիտորիայում տարածված է եղել կապերտագործությունը, որը դեռ գորգագործություն չէր:

Կապերտագործության առանձին ճյուղերի զարգացման հետ միասին, զարգացել է նաև գորգագործությունը: Ըստ արաբական և բյուզանդական պատմիչների տվյալների՝ 9—13-րդ դարերում, միջնադարյան Հայաստանում, հատկապես Դվին, Կարին, Արճեշ և այլ քաղաքներում տարածված է եղել գորգագործությունը որպես պրոֆեսիոնալ արհեստ: Հետագայում հայկական գորգերը թե իրենց զանազան տեսակներով և թե լավ որակով հայտնի են դառնում ամբողջ Արևելքում:

Աշխատության երկրորդ գլխում մանրակրկիտ կերպով խոսվում է գորգագործության մեջ աշխատանքի բաժանման և նրա արվեստի մոտիվների զարգացման մասին, ցույց է տրվում այդ ճյուղի զարգացումը հատկապես միջնադարյան Հայաստանում: Հեղինակը նշում է, որ հայկական բազմաթիվ ընտանիքներ զբաղվում էին գորգագործությամբ. «Յուրաքանչյուր ընտանիք,— ասում է նա,— համաձայն իր նյութական կարողության, տեղական ճաշակով գործել է ինչպես ընտանիքի համար անհրաժեշտ հագուստներ, նույնպես և գորգեր՝ տնային գործածության, աղջիկների և նվերների համար»:

[1] Վ. Թեմուրճյան, *Գորգագործությունը Հայաստանում*, Երևան, 1955, էջ 230:

Հեղինակը փաստական հարուստ տվյալների հիման վրա ցույց է տալիս, որ հայ տաղանդավոր վարպետներն արվեստի այս ճյուղը զարգացրին ոչ միայն իրենց բուն հայրենիքում, այլ նաև Մերձավոր Արևելքում և Եվրոպայում, ինչպես, օրինակ՝ Ադրիանապոլսում, Կապադովկիայում, Ասիուտում (Վերին Եգիպտոս), Բուկովինայում (Ռումինիա), Լվովում, Իսպահանում, Շիրազում և այլուր։

Հեղինակը բավականաչափ կանգ է առել գորգագործական աշխատանքային գործիքների վրա (տորքի, մկրատի և այլն), ցույց տալով նրանցում կատարված փոփոխությունները։ Նա աշխատության երկրորդ գլխում կանգ է առնում հայկական գորգերի գեղարվեստական ձևավորման վրա և ցույց է տալիս, որ հայ ժողովուրդը կիրառական արվեստի նաև այս ճյուղի միջոցով, որն ավելի նվազ չափով է ենթարկվել տիրող դասակարգերի աշխարհայացքին,— ցայտուն կերպով դրսևորել է իր իղձերն ու մտորումները։ Լավ է բացատրված հայերի դիցաբանության վերաբերյալ գորգային զարդամոտիվների էությունը։ Հայկական դիցաբանությունը հարուստ է այնպիսի ավանդություններով, որոնք վերաբերում են փոթորիկի աստված Վահագնի ճակատամարտին դևերի հետ, մեռնող և հարություն առնող աստված Արա Գեղեցիկին, թևավոր ձիերին, թռչունների և վիշապների կռվին, ջրից հղիացող Ծովինարին. կրակի վերաբերյալ հավատալիքներին և ծառերի ու բնության այլ առարկաների պաշտամունքին։ Սրանք էլ հենց այս կամ այն կերպ արտահայտություն են գտել գորգերի զարդամոտիվներում։

Հայկական գորգերի այդ զարդամոտիվներն իրենց բովանդակությամբ մոտ են քրդական գորգերի համապատասխան մոտիվներին։ Նման զարդամոտիվները, հատկապես քուրդ եզդիների հեթանոսական աստված «Մալաքետաուզի» (հրեշտակ սիրամարգի) զարդամոտիվը եզդիները գործում էին «Զիլի» կոչված գորգի վրա։ Ուստի նկատի ունենալով այս և քրդական ուրիշ գորգերի զարդամոտիվները, հեղինակը ճիշտ կերպով, այս փաստերը կապում է եզդիների բնապաշտ լինելու հանգամանքի հետ։ Թռչնային զարդամոտիվների կապակցությամբ հեղինակը գրում է.

«Քրդական Զիլի կոչված կապերտաձև գորգերի կոմպոզիցիայում, դրանք արծիվների փոխարեն դեռևս պահում են իրենց սիրամարգի սխեմատիկ պատկերը, որը մոտից աղերսվում է բնապաշտ եզդիների «Մալաքետաուզ» («Հրեշտակ-սիրամարգ») դիցաբանական պատկերացման հետ» (էջ 103)։

Շատ բարձր են գնահատված այդ զարդամոտիվները, նախ իբրև զարդ կիրառական արվեստում և երկրորդ իբրև ուսումնասիրության արժեքավոր է եզդիների բնապաշտ լինելու հանգամանքի հետ։ Թռչնային զարդամոտիվների ֆանտաստիկ պատկերացումների մնացուկներն անդրկովկասյան ժողովուրդների տնայնագործական գորգերի օրնամենտներում՝ ամենայն հավանականությամբ արտացոլում են նաև այն ավանդությունները, որով հարուստ է ողջ արևելյան, այդ թվում նաև հայկական դիցաբանությունը։

Հեղինակը հանգամանորեն խոսելով միջնադարյան հայկական գորգերի օրնամենտների մոտիվների մասին և բարձր գնահատելով նրանց պատմամշակութային նշանակությունը, նշում է նրանց թե բովանդակության և թե ձևի տեսակետից դիֆերենցիացիայի ենթարկվելու հանգամանքը,

Հեղինակը կանգ է առել գորգերի աշխարհիկ զարդամոտիվների վրա։ Միֆական և աշխարհիկ սյուժեներ արտահայտող գորգերի համեմատական

ուսումնասիրությունը հնարավորություն է տվել հեղինակին՝ կռահելու, որ այդ զարդամոտիվները պատկերում են ոչ այնքան շահագործող դասակարգերի իդեոլոգիան, կյանքն ու կենցաղը, որքան գլխավորապես հայ աշխատավորության տնտեսական ու սոցիալական դրությունը, նրա կուլտուրան, ինչպես նաև գեղագիտական ճաշակը։ Այնուհետև նա ցույց է տվել Անդրկովկասում կապիտալիզմի զարգացման ավերիչ դերը տնայնագործական արհեստների, այդ թվում գորգագործության հին օջախների նկատմամբ։ Գորգագործական օջախների քայքայման հետևանքով, ավելի քան աղքատանում են չքավորական մասսաները։ Գորգագործությունը հետզհետե հատկապես 19-րդ դարի վերջերից կենտրոնանում է քաղաքներում և քաղաքատիպ վայրերում, ստանալով մանուֆակտուրային արտադրության բնույթ։ Դրա հետ միաժամանակ աշխատության մեջ ցույց են տրված կանանց և երեխաների անխնա շահագործումը գորգագործական ձեռնարկություններում, խոսվում է դաշնակցության օրոք ժողովրդական տնտեսության, այդ թվում գորգագործության անկման մասին։

* * *

Վ. Թեմուրճյանն իր աշխատության երրորդ գլխում հանգամանորեն խոսում է Սովետական Հայաստանում գորգագործության վերածննդի, այն Հայաստանի տնայնագործական արտելային սիստեմի մեջ ներգրավելու, արտելային աշխատանքների կազմակերպման, արտադրության աճի, արտադրանքի որակի բարձրացման և գորգագործության զարգացման ուղիների մասին։

Աշխատության մեջ բերված են սովետական օրոք հրատարակված բավականաչափ դեկրետներ, որոշումներ, որոնք ցույց են տալիս արվեստի այս ճյուղի բարձր գնահատականը մեր պարտիայի և սովետական օրգանների, սովետական մարդկանց կողմից։

Աշխատության ամենաարժեքավոր մասը, մեր կարծիքով, սովետական շրջանին նվիրված այս գլուխն է, որովհետև մինչև օրս չունենք լուրջ ուսումնասիրություններ Սովետական Հայաստանի բարձր զարգացման հասած գորգագործության, նրա զարգացման ուղիների մասին։

Հեղինակը կանգ է առնում կոոպերատիվ սոցիալիստական արհեստագործության զարգացման համար Սովետական Հայաստանում ձեռք առնված կոնկրետ միջոցառումների վրա։ 1925 թվականից սկսած տնայնագործական կոմիտեն, Գորգմիությունը և պետական համապատասխան մյուս օրգանները մշակում և իրականացնում են մի շարք լուրջ միջոցառումներ գորգերի արդյունաբերական հումքի վերամշակումը մեքենայացնելու և գորգերի քիմիական լվացման նոր ձևերը կիրառելու համար.

Հեղինակը տվել է Սովետական Հայաստանի գորգագործության պատմությունը, նրա աստիճանական զարգացումը՝ գորգագործության կոոպերատիվ սոցիալիստական սիստեմի բազայի վրա գորգագործության ասպարեզում աշխատող բանվորների աշխատանքի արտադրողականության բարձրացումը։

Փայլուն կերպով դրսևորված է գորգագործական արտելների կատարած անձնվեր աշխատանքը Հայրենական Մեծ պատերազմի ժամանակ ռազմաճակատում ֆաշիստական հորդաների դեմ կռվող մարտիկներին օգնելու խնդրում։

Գրքում հանգամանորեն խոսվում է նախապատերազմյան շրջանում երկրի ժողովրդական տնտեսության զարգացմանը զուգընթաց՝ գորգագործության տնայնագործական հին օջախների՝ նախալեռնային գոտուց դեպի լեռնային և դաշտային շրջանները տեղաշարժվելու դրդապատճառների և գորգագործության էլ ավելի զարգացման մասին։ Հեղինակն իրավացի է, երբ նշում է, որ «Նախապատերազմյան 4-րդ հնգամյակի տարիներին գորգագործությունը Հայաստանում թևակոխում է զարգացման մի նոր շրջան։ Նշանակալիորեն հարստանում է գորգերի թեմատիկան, բազմազան դառնում զարդանախշումը, կատարելագործվում տեխնոլոգիան» (էջ 143)։

Աշխատության մեջ նշված է գորգարվեստի սովետահայ վարպետների՝ Դ. Գարանֆիլյանի, Հ. Քեշիշյանի և ուրիշների նորագույն մեթոդները, օրինակ՝ ըստ Հ. Քեշիշյանի նոր մեթոդի՝ «Գորգի հանգույցները փոխանակ կիսով ոլորված գույնզգույն խավ թելերով գործելու, գործվում են ուղղակի ներկված գունավոր բրդերով» (էջ 143)։ Ապա ցույց է տրված գորգագործ հմուտ վարպետների հնարքներն ու առաջարկները գորգագործության ասպարեզում, ինչպես, օրինակ, Հ. Քեշիշյանի հնարած «Թափանցիկ ցանցը» և այլն։

Հեղինակը հանգամանորեն խոսել է տեխնիկական այլ նորարարությունների, զարդանկարային արվեստում ձեռք բերած հաջողությունների և նրա զարգացման էտապների մասին։ Նա գիտական ընդհանրացումների միջոցով ցույց է տվել, որ հայ գորգագործական արվեստը կանգնած լինելով ժամանակի զարգացման բարձր մակարդակի վրա, միաժամանակ հանդիսանում է ինքնատիպ մի կուլտուրա։ Սովետական պայմաններում հայ ժողովրդի ծոցից դուրս եկած արվեստագետները հնարավորություն ստացան զարգացնելու հայկական արվեստի, այդ թվում գորգարվեստի լավագույն տրադիցիաները։ 30 տարիների ընթացքում նրանք նոր գորգային կտավներով, դիմանկարային գորգի ժանրով հարստացրին հայկական գորգագործական արվեստը։ Նա ճիշտ գնահատական է տալիս ռեսպուբլիկայում և ռեսպուբլիկայից դուրս ճանաչված գորգագործներ՝ Դավիթ Գարանֆիլյանի, Հակոբ Քեշիշյանի, Հարություն Թաբաքյանի, Միսակ Արելյանի և ուրիշների կատարած հմուտ աշխատանքներին՝ զարդանկարային և դիմանկարային գորգերի նոր օրնամենտներ ստեղծելու ասպարեզում։

Հեղինակն իր աշխատության երրորդ գլխում, բացի դիմանկարային գորգերից, բարձր է գնահատում նաև գորգագործական արտելներում ստեղծված մի շարք զարդանկարային գորգեր, արժեքավորում է այդ գորգերի պատմակուլտուրական նշանակությունը, որոնց կոմպոզիցիայում դրսևորված են գյուղացու և բանվորի դաշինքը, գյուղի կոլեկտիվացումն ու գյուղատնտեսության մեքենայացման սկզբնավորումը և այլն։

Այս աշխատության դրական կողմերից մեկն էլ այն է, որ Վ. Թեմուրճյանը տալիս է գորգագործների կյանքն ու կենցաղը, արժեքավորում նրանց կատարած ստեղծագործական աշխատանքները գորգագործության զարգացման գործում, մի բան, որ բացակայում է գորգագործությամբ զբաղված մյուս հեղինակների մոտ։ Սովետական պայմաններում բոլորովին փոխվել է բանվորների, այդ թվում տոցիալիստական արտադրության ոլորտի մեջ ներգրավված գորգագործների կենցաղն ու կուլտուրան։ Հեղինակը մանրամասն խոսում է Հայաստանի գորգագործական արտելներում կիրառվող տեխնոլոգիայի համանմանության մասին, որովհետև սովետական պայմաններում գորգ գործելու

բոլոր պրոցեսն ամենուրեք նույն ձևով է կատարվում և զեկավարվում միևնույն սկզբունքներով։ Այդ մասին կոնկրետ գաղափար կազմելու նպատակով իբրև բնորոշող օրինակ աշխատության մեջ ցույց է տրված «Երգորգարտելի» գորգագործական տեխնոլոգիան։

Այս արժեքավոր աշխատությունն ավելի շահած կլիներ, եթե լավագույն գորգանկարները տպված լինեին գունավոր։ Դրանով հնարավորություն կտրվեր անմիջական շոշափելի գաղափար կազմելու ժողովրդի ճաշակի, գույների ընտրության և ներդաշնակության մասին։ Աշխատության մեջ խոսվում է հայկական գորգային թեմատիկայում ժողովրդի դիցաբանական պատկերացումների կոնկրետ դրսևորումների մասին, սակայն գրքում այդ երևույթը գրեթե չի իլյուստրացված համապատասխան գորգանկարներով, ուստի և այդ մասին ասվածը վերջին հաշվով քիչ մատչելի է մնում ընթերցողի համար։ Կարելի է նշել մի քանի մանր այլ թերություններ ևս, սակայն սահմանափակվենք այսքանով։

Այսպիսով, անհրաժեշտ է նշել, որ ընկ. Թեմուրճյանի «Գորգագործությունը Հայաստանում» աշխատությունն արժեքավոր ներդրում է հայ ժողովրդի բազմադարյան հարուստ կուլտուրայի ուսումնասիրության բնագավառում։

Ա. Ավդալ

Сектор Востоковедения АН Арм. ССР
БИБЛИОТЕКА
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿ ԳԱ ԱՐԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐ